ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՆԷՔՍՊՐՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ,ԼՈՌՈՒ ՄԱՐԶ,Ք.ՎԱՆԱՁՈՐ
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂ. 8/49-1

ՀԵՌ. 094 14 84 10
ԷԼ.ՓՈՍՏ shinexprtllc@gmail.com

ООО "ШИНЭКСПРТ"
РА. ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ,
г.ВАНАДЗОР,УЛ.ТАТЕРАКАН 8/49-1

"SHINEXPRT" LLC
8/49-1 TATERAKAN ST., VANADZOR,
LORI REGION, RA

«15» ապրիլի 2026թ. No ՆՓ-30-03-2026/001

Պետ. լիցենզիա No 17157

Նախագծող՝ **«ԷԴ ԱՐՏ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ**

Տնօրեն՝ **Է. Եղիազարյանին**

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

**ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի կրթահամալիր տանող Տ-10-25 /Մ-4/ - Լուսաձոր կմ0+000-կմ1+500 մարզային նշանակության ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքներ**

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի կրթահամալիր տանող Տ-10-25 /Մ-4/ - Լուսաձոր կմ0+000-կմ1+500 մարզային նշանակության ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքներ նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 143766,92ՀՀ դրամ ներառյալ Ա.Ա.Հ:

( փորձաքննության եզրակացություն առդիր 2 էջ):

«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ տնօրեն՝ Ե. Ասատրյան

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 գրքից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

**Ճարտարապետաշինարարական մաս**

Սույն նախագծով նախատեսված է ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի կրթահամալիր տանող Տ-10-25 /Մ-4/ - Լուսաձոր կմ0+000-կմ1+500 մարզային նշանակության ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքներ :
Նախագիծը կազմվել է ըստ Տավուշի մարզպետի աշխատակազմի տրված առաջադրանքի:
Ներկայացված տեղամասերում 2026 թվականի հունվար ամսին կատարվել է հետախուզական աշխատանքներ:
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
Սույն ճանապարհահատվածը գտնվում են Տավուշի մարզում, նանորոգվող ճանապարհի երկարությունը՝
 1-ին ծրագիծ – 1.498 կմ
Տվյալ փողոցի ճանապարհային պատվածքը գտնվում է անմխիթորյան վիճակում, ճանապարհի մակերևույթը տեղ-տեղ պատված է խոշոր և մանր ճաքերով, ինչպես նաև՝ բազմաթիվ փոսային նորոգումների կտորներով և գոյություն ունեցող փոսերով
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ
Նախագծային աշխատանքները կատարվել են ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» նորմաների և պահանջների համաձայն, AutoCad և Civil3D համակարգչային ծրագրերով:
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔ
Նախատեսվում է իրականացնել՝ գոյություն ունեցող ա/բ ծածկի ֆրեզավորում և մանրահատիկ ա/բետոն h-5սմ շերտի տեղադրում:
Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում:
ՈՒՂԻՆԵՐ
Մուտքերում նախատեսված է իրականացնել պատվածք:
Մուտքերում ճանապարհային պատվածքը նախատեսված է իրականացնել հետևյալ կառուցվածքով.
 Խճային հիմք h= 12սմ
 Մանրահատիկ ա/բ Բ տիպի h=5 սմ
Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում:
ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆՇԱԳԾՈՒՄ
Նախագծով նախատեսված է իրականացնել ճանապարհի երթևեկելի մասի նշագծում թերմոպլաստով h=3մմ հաստությամբ , լուսանդրադարձիչ գնդիկների կիրառմամբ:
Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում:
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ
Նախագծով նախատեսված է տեղադրել ճանապարհային նշաններ:
Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում:
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ
Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրին: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամքով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ բնահողից և շին . աղբից տեղափոխելով այն լցակույտ:
Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաստաթղթերը. ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» և ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպում»:
Շինարարության ժամանակ հաշվի առնել գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական

կառուցվածքները /գազատար, ջրատար խողովակաշարեր, կապի և էլեկտրո մալուխներ/ տեղյակ պահելով համապատասխան կազմակերպություններին:
Բնապահպանական բոլոր միջոցառումները պետք է իրականացնել բնապահպանական կառավարման պլանին համապատասխան:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինէքսպերտ» ՍՊԸ-ն նշում է, որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Շինէքսպերտ» ՍՊԸ-ի** փորձաքննությունը **ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է**, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և

**ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ**

Գլխավոր ինժեներ՝ Ա. Զալյան

Փորձագետ՝ Գ. Գուլանյան